

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԸՐՊԵՆՔԻ ՄԱՐԴԱՅԱՄԱՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՋ

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ աւանդութիւն դարձած է տասը տարին անգամ մը մարդահամար կատարել: Անցնող մի քանի տարիներէ ի վեր յատուկ յանձնախումբեր սկսած էին նախապատրաստական աշխատանքներու, որոնց մէջ կան նաեւ հայ պաշտօնեաներ եւ պատասխանատուներ:

Առ ի գիտութիւն Առաջնորդարանը սիրով կը տրամադրէ Արմէն եւ Կլորիա Յամբար Դահլիճը, ուր մարդահամարի յանձնախումբը հանդիպումներ կ'ունենայ:

Յունուար 20ին Պըրպէնքի Մարդահամարի Գրասենեակին մէջ տեղի ունեցաւ յատուկ հաւաք մը, որուն ներկայ գտնուեցան Առաջնորդ Սրբազան Յայրը, Պըրպէնքի Ծովսի Յոգեւոր Յովիւր՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան եւ Առաջնորդարանի Վարիչ Տնօրէն՝ Բոշ. Յարութ Սրկ. Մարգարեան:

Գործադրուեցաւ ճոխ յայտագիր մը: Սրբազան Յայրը ելոյթ ունեցաւ, ապա յատուկ աղօթք կատարեց եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց մարդահամարի աշխատանքներուն: